21. ՍՈՒԹ ԽՈՐՈԽՊԵՐ

Կէլնի, կէլնի մեյ խատ կընիկ: Էսա կընգյան մեկ խատ լաճ կէլնի: Էսա լաճ մեկ օր կէլնի փողան, խեստ ուր ընգյընրներաց կխաղա: Մեյ խատ մարթըմ կուգյա էն դեխեն: Կուգյա էսա լաճ կպընռնի, կասի. - Տյու վի՞ր փղեն ես, քյո խոր անուն ի՞նչ ի:

Լաճն ի, կասի. - Իմ խոր անուն Վարդան ի:

Էդա մարթ կասի. - Վա՜յ, ես քյո խորոխպերն եմ, խազար ջեորեով քյե կընդես: Առա քյե քյիչմ ոսկի, դար դուր քյո մոր՝ ասա՝ վաղ խորոխպեր կուգյա մեր դուն:

Լաճն ի, որ ոսկիքյ կառնի կուրախնա, չուր դուն մեյ կվազի, կասի. - Մարե՛, զիկ խորոխպեր կա՞:

Մեր կասի. - Չէ, բալամ, քյե խորոխպեր չկա:

Ոսկիքյ կլյի մոր գյոքյ, կասի. - Մարե՛, ես խեստ իմ ընգյընրներաց կխաղի, դեսա որ էն դեխեն մարթմ' էկավ, ասաց. «Տղա՛, քյո խոր անուն ի՞նչ ի», ես ասացի. «Վարդան ի»: Զիկ ասաց. «Վա՜յ, ես քյո խորոխպերն եմ, առա էսա ոսկիքյ, դար դուր քյո մորն, ասա. խորոխպեր կասի՝ վաղ կուգյամ ծեր դուն»: Ջաենամ թե սուտ խորոխպեր ի, մե խացի փարա չընկեր, էսա ոսկիքյ կուդանքյ խացի, կուդենքյ»:

Էն մեկել օրն ի, սութ խորոխպերն ի, կուգյա, պարև աստընծու պարին կանի, կնստի: Քյանիմ օր կմնա իսոնց դուն:

Էն մեկել առատուն կասի. - Տղա բալամ, էլի էրթանքյ ֆռանքյ:

Կէրթան, դաշտի մեչ կկայնեն: Սութ խորոխպերն ի, մեյ խատ թեոզընմ կյանի զյեդին: Գյեդին կպայվի, կխանի ուր մատնեկ, կմտուցի լաճու մատ, կասի. - Քյե կէճուցիմ էսա փոսի մեչ, կէրթաս ենդեղ, մտնես էոդեյդերեաց մեչ: Էդա էոդեքյ, բիթուն ակնունքյ-ջավահիլ ին լյուկ, ընկուն քյելիս որ փեշերդ պիլա չդընպնի ինոնց,

ծեռ չի տաս: Կէրթաս, կէլնիս մեչ տըրախտին: Տըրախտ վերին գյըլեռխ լըսուկ ի, բիթուն էլ կվառվեն: Տըրախտի վիրին գյըլեռխ մեյ խատ կանթեղըմ կա՝ ընսեր ի, չի վառվի: Կէրթաս էտա կանթղի մեչի ծեթ կթափես, կանթեղ կառնիս, կըտընիս քյո ջեռպ՝ կուգյաս: Կուգյա՜ս, կմտնիս են էօղեքյ, ինչ կանդար որ քյո ջան կուզի՝ ոսկի, ջավահիլ, ակնունքյեղեն կլսես ծոսերտ ջեռբերտ, կուգյաս կէլնիս տյուս:

Լաճն ի, կմտնի էտա փոս, կէրթա էտա էօղեքյ, էտա ակնունքյ, ջավահիլներ որ կտիսնա, պերան կմնա պաս, կասի. «Աղորթմանս որ տըրախտ ի»: Էտա կանթըղներ, էտա գյոնըսգյոն ծաղիկներ, են անմախական, անուշ խոտ, խելքյ գյըլխուս կտանին:

Կէրթա, կէրթա, չուր տըրախտի վիրին գյըլեռխ կտիսնա գյեռ մեյ խատ կանթեղըմ կա, ծեթ լսուկ պատրուքյ ինե, աման չի վառվի: Կմոտանա, պատրուքյ կխանի, կթալի, մեչի ծեթ կթափի, կանթեղ կտնի ծոս, կառնի, կտառնա կուգյա մտնի էօդեղտերաս մեչ. ջեռբեր, ծոսեր քյանի որ կտանի էտա ակնունքյեղեն կլըսի, կուգյա կասի. - Խորոխպեր, տե՛ քյաշի զիկ:

Խորոխպերն ի, կասի. - Բալամ, պիրեսի՞ր կանթեղ:

Լաճն ի, կասի. - Պիրեսի:

Խորոխպեր կասի. - Կանթեղ տուր, որ քյե խանեմ:

Լաճն էլ կասի. - Չէ, խան որ տամ:

Են կասի՝ տուր, որ խանեմ. են կասի՝ չէ, խան, որ տամ:

Վարհասըլի, նա լաճ կանթեղ կուտա, նա էլ խորոխպեր լաճուն տյուս կխանի: Մեյ խատ էլ թեռզ կթալի, էտա ճեղքյ կկոսվի՝ լաճ կմնա ենտեղ:

Լաճն ի, որ կմնա ներս՝ կիշեր կուլա, սերեկ կուլա, իրեքյ օր կպուտվի էտա տեղ:

Էսա լաճու մերն ի, ինքյն ուր կմտաճի, կասի. «Աջեբա՛՝ իմ տղեն ի՞նչխ էլավ, աղորթ որ սութ խորոխպեր իմ տղեն տարավ, կուրիսեսյ վեր գիկ»:

Լաճն ի, որ էտա տեղ շատ կուլա, կպուտվի գյեսին, ծեռաս մատնիկ կպուտվի գյեսին, մեյ խատ ջինըմ կթոնի տյուս, կասի. - Տղա՛, ի՞նչ էլեր ի քյե, ինչի կուլաս, ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կասի. - Ես կուզիմ որ զիկ ըստեղեն խանիս տյուս, տընիս գյեսին իրես:

Ջինին ի, լաճուն կասի. - Աչքերդ խփի:

Լաճն ի, աչքեր կխփի, մեկել կպանա, կիրիշկա, որ ի՞նչ. էլեր ի գյեսին իրես: Կուրախնա, վազեվազ կէրթա ուր մոր մոտ:

Մերն ի կասի. - Այ բալա՛մ, էսա կանդար օր տյու դի՞ր իր կընասի կուրիսի:

Լաճն ի, կասի. - Մարե՛, էլ մի խառցուցի, էն սութ խորոխպեր աղորթմանց, սութ խորոխպեր էր: Մարե՛, իս անոթի մեռեր եմ, ալա փյու մեյ կտոր խաց պե ես ուտեմ, նոր իմ գյլխու գյացած մեյ-մեկ քյե կպատմեմ:

Լաճն ի, խաց կուտի կպռծնի, կասի. - Մարե՛, էն սութ խորոխպեր զիկ առից, տարավ տաշտ ֆռալ: Կայնանքյ մեչ տաշտին: Էն մեյ խատ թեռզ մ'իթալ գյետին, գյետին պատռավ: Ուր մատի մատնիկ խանեց մտուց իմ մատ, ասաց. «Քյե մտուցիմ էսա խորի մեչ, յոթ-ութ խատ մեչ մեկ-մեկու էօղա կա, բիթուն ոսկի, ակնունքյ, ջավահիլ ին, ծեռ չի տաս, ըսկուն էրթաս, որ փեշերտ բիլսւ չի դէպնի ինոնց: Կէրթաս կէլնես տըրախտ, էնտեղ բիթուն կանթըղներ կվառվեն, փյու կէրթաս, վերին գյըլեռխ ·մեյ խատ ընցուկ կանթեղըմ կա, էտա կանթղի ծեթ կթափես, կանթեղ կտնես քյո ծոց, կուգյաս: Կուգյաս, կմտնիս էն էօղեքյ, ինչ կանդար որ քյո ջան կուզի՝ ակնունքյեղեն, ջավահիլ կլցիս քյո ջեռբեր, ծոցեր, կուգյաս, ես քյե կխանիմ փյուս»: Մտա կընացի, իմ աչկեր մնաց պաց, ըսկում որ էտա էօղեքյ ոսկի, ակնունքյ, ջավահիլ լցուկ էր: Մտա կընացի տըրախտի մեչ, զաթի խելքս կընաց: Մարե՛, փյու կասիս գյեռ աղորթմանց տըրախտն էր, բիթուն կանթըղներ կվառվին, գյոնըսգյոն ծաղկըներաց անուշ խոտ զաթի մարթու խելք գյըլխոց կտաներ: Կընացի տըրախտի վերին գյըլեռխ, տեսա մեկ խատ կանթեղ կեր, որ ծեթ լցուկ, պատրուքյ ինի՝ աման չէր վառվի: Ծեթ թափեցի, պատրուքյ թալեցի, կանթեղ տըրեցի ջեռբս, էկա մտա էօղեքյ, ծոցերս, ջեռբերս, քյանի որ կտաներ, ոսկի, ակնունքյ, ջավահիլ լըցեցի, էկա փռսի մոտ, բռռացի. «Խորոխպե՛ր, էկա, կանթեղ պիրեցի, զիկ քյաշի փյուս»: Խորոխպեր զիկ ասաց. «Բալա՛մ, կանթեղ տուր, որ քյե քյաշեմ փյուս»: Ես էլ ասիցի. «Չէ՛, խորոխպեր, զիկ խան փյուս, որ կանթեղ տամ»: Վարհասըլի, խաբարըմ զիզնից, մեկ ինորից, մեկել տեսա, որ չիմ գիտի ինչ արաց, էտա վռսի պերան կռծվավ, ես էլ մնացի ինե: Իրեքյ օր ·կիշեր-ցերեկ լացի, պռտվա, տիսա րիրտան մեկ խատ մարյթըմ* էկավ փյուս, զիկ ասաց. «Տղա՛, ի՞նչի կուլաս, ի՞նչ կուզիս»: Ես ասեցի. «Կուզեմ որ զիկ խանես խռղի իրես»: Էտա մարթ զիկ ասաց. «Աչկերտ կռծի»: Ես էլ իմ աչկեր կռծեցի, մեկել պացի, տիսնամ որ ի՞նչ. գյեռ ելեր եմ փյուրս, լուս աշխար: Վազեցի էկա տուն: Առա քյե ոսկի, ակնունքյ, ·ջավահիլ, հա տուր խացի, ուտենքյ»:

Լաճն ի, ուր ջեռբի, ծոցի ոսկիքյ, ջավաեիլներ որ րիթուն կտառտըլկի մոր գյոքյ, կպռծնի, ծոցից կխանի կանթեղ, կասի. - Մ՛ռ, քյամպախ էլնի, էսա ժանքյռոտ կանթըղի խամար էր, որ քյախներ մնի գետնի տակ:

* Էն լաճ չէր կիտի, որ էտա մարթու երևնալ ուր մատնիկի մարիֆաթն էր (Ծ.Ք.)

Մերն ի, ուրախ-ուրախ ոսկիքյ կտեղավորի. կանթեղն էլ կթալի տանտրան մեկ պատխան, կմնա դա:

Մեր էնան լաճն ին, էտա ոսկիքյ քյանիմ տարի բեռլ-բեռլ կուտեն, չեր կխըլսնի: Լաճն էլ զաթի ճոճայե, իլե բաբագյիթ մարթ:

Էն մեկ օր փարեն բիթեն-բիթեն կխըլսնի: Լաճն ի. մոր կասի. - Մարե, բարե էլի, էնա պատխնի կանթեղ զարկ քյուլ. թող տեղնանա, տանեմ շուկեն ծախեմ, ախըր մեկ-երկու օրվան խայի գյին կէլնի:

Մերն ի, կէլնի ճյուր կտայըլսյուցի, պարուկ կթալի ինե, կառնի քյուլ, կինի վեր կանթըղին: Համան խետ քիչըմ կպոտի թե չէ՝ ջինըմ կթոնի տյուս, կասի ուշիկ-ուշիկ. - Ի՞նչ էլավ քյե, ասա՝ խենքյ ի՞նչ կուզիս:

Մերն ի, խետ որ էսա ջին կտիսնա, լեզուն կկապվի, կճըվա, կփոքյվի գյետին, կանթեղն էլ կծիփի տան մեկ պուճախ, տառնա կվազի մոտ լաճ:

Լաճն ի, կասի. - Մարե՛, ի՞նչ էլավ քյե, ու՞ր ի կանթեղ:

Մերն ի, կասի. - Գյեռ թալիցի տան մեկ պուճախ:

Լաճն ի, կվազի կէրթա կանթեղ կառնի, կուգյա կասի. - Մարե՛, ես քյե ասեցի՝ կանթեղ պսպղացու, որ գյին անի, տյու զարկեր իս գյետին, պամ'էլ ճըմըլցուցեր իս:

Մերն ի, կասի. - Տա՛ր, տա՛ր, ասլրծու սիրուն, ես էտա կանթեղից կվախենամ:

Լաճն ի, կասի. - Ի՞նչ ի, մարե, ինչ էլավ որ:

Մերն ի, կասի. - Խետ որ մեյ խատ պաշլայիցի կայիմ-կայիմ պոտել, բիրդան տեսա մարթըմ թռավ տյուս, ասայ ուշիկ-ուշիկ. «Ինչ էլավ քյե, ասա խենքյ ի՞նչ կուզիս», ես էլ վախեցա, թալիցի, էտա մարթն էլ կուրիսավ:

Լաճն ի, խետ որ էսա պան կլսի, կանթեղ մեյ խատ կպոտի: Պոտելուն պես ջին կթոնի տյուս, կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճ կասի. - Վալա, անութի ինքյ, խայ պի՝՝ուտենք:

Ջինն ի, կէրթա մեյ խատ ոսկի սինիմ կպիրի, վեր էտա ոսկի սինուն սիվտակ լոշեր փլռուկ, խազարանմուշ կերակուրներն էլ ոսկի թաբախներայ մեչ լյուկ:

Մերն էնան լաճ կնստեն կուտեն, կխմեն, կկշտանան: Վարհասըլի, ըստըրիս հըմեն օր լաճն ի կանթեղ կպոտի, ջին կթոնի տյուս, խայ կուզին, խայ կպիրի, կուտին, քեֆ կքյաշեն:

Ավուր մեկ լաճն ի, կանթեղ կպոտի, ջին կթոնի տյուս, կասի. - Ի՞նչ կուզիս:

Կասի. - Քյեզնիցյ կուզեմ մեկ ալնախ ակնունքյ, ջավահիլ:

Ջինն ի, մեկ ալնախ ակնունքյ, ջավահիլ կպիրի, կուտա լաճուն:

Լաճն էլ էփա ջավահիլներ կուփա ուր մոր, կասի. - Մարե՛, էլի կընա̈ թաքավուրրու սարեն, էսա ալնախ դիր թաքավրու ա̈ռճև, ինոր ախչիկն ուզի զիկ խամար:

Մերն ի, կասի. - Բալա՛մ, վազն արե էփա սավփից, թաքավոր իսկի ուր ախչիկ կուփա քյե՞:

Լաճն ի, կասի. - Մարե՛, քյո դավին ի՞նչ ի, ես քյե կասիմ՝ կընա ուզի:

Մերն ի, կառնի ալնախ ջավահիլ, կէրթա թաքավորրու սարեն: Առապմե չո̈ւր իրիկուն կկայնի դեոր չի գյա ինոր: Իրիկուն կփա̈ռնա, կուգյա փուն: Էն մեկել օր՝ էլ մ'էլ ըսկուն, էն մեկել օր՝ էլ մ'էլ ըսկուն, վարհասլի, վեր իրեքյ ավուր թաքավորրու Վա̈զիրն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էսա իրեքյ օր ի որ մեկ խափ խեղճ պառավ մեյ խափ ալնախմ ծեռ առապմե չո̈ւր իրիկուն կուգյա կկայնի ըսփեղ, դեոր չէլնի որ մփնի ներս, վա̈ղն առապուն ա̈ռա̈ճ ինոր կանչենքյ ներս, ինոր դա̈փ փեսնանքյ, խեղճ ի:

Թաքավոր կասի. - Տյու կիփես՝ քյո քեոֆ:

Վեր չորս ավուր պառավն ի, որ կէրթա̈ թաքավորրու սարեն, վազիր կուգյա ա̈ռա̈ճ էսա պառվուն կկանչի: Պառավն ի, կմփնի ներս, թաքավոր կխառցուցի, կասի. - Դե ասա՛ խենքյ, պառավ, ի՞նչի իս էկե ըսփեղ, քյո փա̈րդն ի՞նչ ի:

Պառավն ի, կասի. - Իմ փա̈րդն էն ի, որ փյու քյո ախչիկ փաս իմ լաճուն:

Թաքավորն ի, մեկ խափ կծծղա, կասի. - Խա՛, պառավ, կուփամ, ինչ կէլնի:

Պառավն ի, որ էսա պան կլսի, կա̈ռա̈ճանա, ուր ծեռաց ալնախ կփընի թաքավորրու ա̈ռճև, կասի. - Թաքավոր ապրած կենաս, որ ըսկունի, էսա իմ թա̈րա̈ֆեն կուփաս իմ խարսին նշան:

Թաքավորն ի, ա̈մր կանի ուր վա̈զիրին որ ալնախ պա̈նա, փիսնան խենքյ ի՞նչ ի: Խեփ որ ալնախ կպա̈նա, թաքավորն էլ ուր վազիրն էլ կզարմանան, պերաններ կմնա պա̈ց:

Թաքավորն ի, կասի. - Պառավ, կէրթա̈ս իմ ախչկան խամար քյառսուն խափ ա̈րա̈բ ախչիկ, քյառսուն խափ էլ սիվփակ ախչիկ խալայեղ կպիրիս, աման թաքավորավայել այուսլի-սանթանսթլի, որ իմ ախչիկ փամ քյո լաճուն:

Պառավն ի մռութ-մալուլ կփա̈ռնա եփ կուգյա, լաճուն կպապմի:

Լաճն ի, կասի. - Մարե՛, մա̈ռա̈խ մ'անե, էփ էլ պան ի, որ թաքավորն ուզեր ի, անուշ մնա պիրողի ջան:

Էն մեկել օր, լաճն ի, կանթեղ կպռփի, ջին կթռնի փյուս, կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կասի. - Քյեզնից կուզիմ քյառսուն խափ ա̈րաբ ախչիկ,

քյառսուն խապ սիվպակ ախչիկ, բիթ՚ունն էլ մեկ բոյ, մեկ փեսակ խալվներով: Աման ըսկուն սյուսլի խրեղեն խալավ էլնի խագյված, որ մեր թաքավորին ըսկուն խալավ չէլնի. հըմեն ախչըկան գյըլեոխ ոսկի թաքյ էլնի, հըմեն ախչըկան գյըլխու վերեն մեկ-մեկ ոսկի սինի էլնի, մեչ էպա սինիյպերայն էլ բիթ՚ուն ակնունքյ ջավահիլ լցուկ էլնի: Մեկ ծեռքյ էլ խալավ կպիրես իմ մոր, որ հըմենից պըհա խորոպ էլնի:

Ջինն ի, լաճու ուզածներ բիթ՚ուն կպիրի:

Լաճն ի, կէլնի ջինի պիբած խալվըներ կխագյույի ուր մոր, ախչըկներ կիսկի սրա, մերն էլ կիսկի իսոնց առճև, կէօրեոխկի թաքավորի մոտ:

Իսոնքյ որ ճամբախ կէրթան, արև կզանի վեր իսոնց խալվընեբայ, խալվըներայ շառավելքյներ կզանի մեչ թաքավորու էօդին:

Թաքավորու աչկ որ կինի էսա շառավելքյն, իր վազիրին կխառցույի, կասի. - Էսա ի՞նչ շառավելքյ ին մեչ իմ էօդին:

Վազիրն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, պառավն ի, էկավ քյո ուզածներ բիթ՚ուն էլ պիրեր ի խետ ուր:

Թաքավորու սարի պոներ կպանան, պառավն ի, խետ ուր խալայեղներայ կմտնի ներս, կէրթա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո ուզածներ պիրեցի:

Թաքավորն ի, կասի. - Շատ աղեկ, պառավ, պյու կընա, ես իմ ախչիկ հանսա կուտամ քո լաճուն:

Պառավն ի, կթողնի, կպառնա եպ:

Լաճն ի, կաչկի մեկ օր, էրկօր, իրեքյ օր, որ թաքավոր խաբար էօրեոխկի, խարսնսի թադարյուք փիսնան, կփիսնա որ չէ՝ թաքավոր ըսկի էնպեղեր չէլնի: Կէլնի կասի. «Մեյ խապ էրթամ շուկեն ֆռամ, խենքյ ի՞նչ կէլնի, ի՞նչ կա, ի՞նչ չըկա»: Լաճն ի, որ կէրթա շուկեն, կփիսնա որ դարբաք կավելեն, կճրճնին: Հա՛ր քյեշ ուր պուն, պոներ ծաղկըներով զարդըբեր ի: Լաճ կզարմանա, խառցույի իսոր, ինոր թե, ի՞նչ բաս ի: Իսոր կասեն, թե թաքավոր ուր ախչիկ կպսակի վեր վազիրի լաճուն:

Լաճն ի, որ էսա խա՛բա՛ր կլսի, ինչխ ճ՚իչ քյարըմ փիր մեչ իսոր գյըլխուն: Համան շոպմ կպա՛ռնա պուն: Աման շատ աֆքիար կէլնի իսոր, մեչ ուր մպայ, կասի. «Շատ աղեկ, թող փսայվեն, ես կիպեմ ինչ խանեմ ինոնց գյըլեոխ»:

Թաքավորն ի, յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանի, ուր ախչիկ կպսակի վեր վազիբի լաճուն: Էն իրիկուն ոբ խարս ·էնա՛ն փեսեն պիպի պանեն մեյպեղ քընըցուցեն, լաճն ի, կանթեղ կպոպի, ջին կթռնի պյուս, կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կասի. - Կուզիմ որ էն գյախ, որ վա̈զիրի լաճ կմըտնի թաքավորու ախչըկան էօդեն, տուռ կկոծի, տյու զիկ տանիս պառկըըտւցիս թաքավորու ախչըկան ծոց, վազիրի լաճուն էլ տանիս կայնըըտւցիս փուխցի մեկ քյեոշեն, չուր լյ̈ս ուր տեղեն չի կանա իրար դեպնի: Աղոթըրնի դեմ զիկ գյընա պիրես ըստեղ, վազիրի լաճուն էլ տանես պառկըըտւցես թաքավորու ախչըկան յաթղի մեչ, հա̈լա̈ չի մտի տեղ, տուռ տփին, խարս-փեսեն խանին վեր, ընկուն որ վա̈զիրի լաճ չի կանա խետ թաքավորու ախչըկան լեզու բիլա̈ թոճել:

Ջինն ի, էն իրիկուն որ խարս-փեսեն կտանին մեկտեղ, վա̈զիրի լաճն ի խալավ կխանի, կմտնի մեչ ուր տեղաց թե չէ՝ կվիրուցի, կտանի կայնըըտւցի փուխցի քյեոշեն: Էսա լաճուն էլ կպիրի, կպառկըըտւցի թաքավորու ախչըկան կուշտ:

Լաճն ի, ուր թուր կչըլտի, կտնի ուր էնան թաքավորու ախչըկան արալըղ, կպառկի, կքընի:

Աղոթըրնի տեմ ջինն ի, կուգյա լաճուն տեղաց մեչեն կխանի, կպիրի ուր տեղ: Վա̈զիրի լաճուն էլ կպիրի, կպառկըըտւցի մեչ թաքավորու ախչըկան յաթղին: Կպառկի թե չէ՝ էօդի տյուռ կտփին: Վա̈զիրի լաճն ի, շոտըմ կթոնի յաթղից կելնի տյուս, խալավ կխայնի: Թաքավորու ախչըկան խալայեղներ կմտնեն ներս, ընկուն որ վա̈զիրի լաճ չի կանա խետ թաքավորու ախչըկան լեզու բիլա̈ թոճիլ:

Լաճն ի, իրեքյ օր ըսըսկընա կանի:

Իրեք օրից սորա թաքավորն ի կասի. «Մեյ խատ իմ փեսեն կանչեմ խետ խաբա̈ր տամ, խենքյ, ի՞նչ կասի իմ ախչըկան, խավնե՞ր ի, թե չէ»:

Վա̈զիրի լաճն ի, կելնի կուգյա մոտ թաքավոր:

Թաքավոր կխառուցի, կասի. - Բալա՛մ, ի՞նչխ իս, իմ ախչըկան խավնի՞ր իս, թե չէ:

Վա̈զիրի լաճն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, քյեզնից պախիմ, աստծուց ի՞նչխ պախիմ: Ես չի̈ր էսօր հալա̈ նա̈ քյո ախչըկան տա̈ռն իմ տեսե, նա քյաղցր:

Թաքա̣վոր որ էսա պան կլսի, շատ կզարմանա: Կասի. - Ի՞նչխ թե նա տառն իս տիսե, նա քյաղցր:

Վա̈զիրի լաճն ի, կասի. - Վալա՛հ, հալ-հեքիաթ, էն օր որ տյու զիկ փսակեցիր, էն առճի իրիկուն որ մե տարաքյ մոտ մեյ-մեկ, ես իմ խալավ խանեցի, պառկա թե չէ՝ բիրդան զիկ իմ յաթղից խանեցին, տարան կայնըըտւցին փուխցի մեկ քյեոշեն՝ չուր լյ̈ս: Լյուսյու տեմ պիրին պառկըըտւցին մեչ յաթղին: Հալա չեմ պառկի, կուգյան էօդի տյուռ կտփեն, կխանեն վիր: Դողրին որ կուզիս, զիկ նա̈ էն կնիկն ի լազըմ, նա̈ էն փուխցի քյեոշեն կայնի չուր լյ̈ս: Տյու

որ կիտիր քյո ախչընկան ուրիշ սիրական կեր, ինչի՞ փսակեցիր վեր զիկ:

Թաքավորն ի, կասի. - Կընա՛, էլ չուր ես քյե չասիմ, չէրթաս իմ ախչընկան մոտ:

Վազիրի լաճն ի, որ կէրթա. թաքավոր ըստընրիս կկանչի ուր ախչիկ, կասի. - Ախչի՛, քյո փեսեն ի՞նչխ մուրթ ի, կխավնի՞ս թե չէ:

Ախչիկն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, քյեզնիկ պախեմ, աստծուկ ինչխ պախեմ, ես չուր էսօր նա ինոր տառն իմ տիսե, նաւ ինոր քյաղցր: Իրիկուն կպառկի խեստ կշտիս թե չէ, յաթղի մեչեն կխանին, կտանին: Մեյ խատ ուրիշ ջաեելմ կուգյա, ոսկի թուր կչընտի, կդնի մեր օրթեն, կպառկի կքյնի չուր լիս: Առատուն աղոթընրնին էտա ջահել կէլնի կէրթա: Վազիրի լաճ կպիրին կպառկընցուցին: Համան կպառկի թե չէ՝ կուգյան տյուռ կտտեն, մե կխանեն վիր, ըսկուն որ չուր էսօր ես խեստ ինոր լեզու բիլաւ չիմ թռճե:

Թաքավորն ի, որ էսա պան կլսի, մեյ խատ դյուշմիշ կէլնի, խաբար կէօրեռխկի, պառվու լաճուն կկանչի: Լաճն ի, կէլնի կէրթա մոտ թաքավոր:

Թաքավորն ի, լաճուն կասի. - Տղա՛, ես իմ ախչիկ կուտամ քյե, աման քյեզնիկ կուգիմ որ մեյ խատ ըսկուն քյեռշկ-սարեմ շինիս, որ ինոր ծեր խասնի իմ խաս բանչի ոռքյին: Քյո քյեռշկ-սարիկ էլ խալի փռես չիր իմ քյեռշկ-սարեն, որ իմ ախչիկ տամ քյե:

Լաճն ի, կասի. - Շատ աղեկ, թաքավոր ապրած կենաս, թող քյո ուզածն էտա էլնի:

Կասի, կտառնա կուգյա տուն:

Իրիկուն ի, մեյ խատ կանթեղ կպռտի, ջին կթոնի տյուս, կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կասի. - Կուզիմ մեյ խատ ըսկուն քյեռշկ-սարեմ շինիս որ ինոր մեկ ծեր խասնի թաքավորու խաս բանչեն: Ըսկում էլ պանկր էլնի, որ խով թալի վեր թաքավորու քյեռշկ-սարին: Էտա քյեռշկ սարիկ էլ խալի-խալիչա փռուկ էլնի, չիր թաքավորու քյեռշկ-սարեն: Էտա քյեռշկ-սարեն ըսկուն ճիչ էլնի, որ քյառսուն էօդա մեչ մեկ-մեկելու ֆռա: Էօդի տռներ, փենջարեքյ բիթիւն ակնունքյ, ջավահիլ, ալմաստիկ շինուկ էլնի: Քյեռշկ-սարի տռներ բիթիւն ոսկուց, առծթիկ էլնի: Բիթուն պան ուր տեղն էլնի, մենակ մեկ փենջարա պակաս մնա:

Ջինն ի, մեչ մեկ կիշերվան լաճու ուզած քյեռշկ-սարեն կշինի կկայնընցուցի, էտա քյեռշկ-սարիկ էլ խալի-խալիչա կփռի:

Առատուն ի, թաքավոր կէլնի վեր, կիրիշկա որ ուր էօդեն մութն ի: Կկանչի վազիրին, կասի. - Էսա ի՞նչ բաս ի, մեր սարեն էսօր ի՞նչի մթներ ի:

Վազիր կասի. - Թաքավոր ապրած կենաս, էլի տես՝ են պառվու լաճ քյո ուզած քյեռշկ-սարեն շիներ ի:

Թաքավորն ի, կէլնի վեր, կիրիշկա էտա քյեռշկ-սարեն՝ պերան կմնա պայ, ծեռքյերով ուր աչքյեր կճըմռթի, կասի՝ էսա էրազ ի՞, ի՞նչ ի:

Վազիրն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էսա շինածուրիկ պան ի, ըսըսկընա պան չէլնի:

Թաքավոր, վազիր կայներ են, զյեռ էտա քյեռշկ-սարեն թամաշա կանին, բիրդան պառվու լաճ կմտնի ներս, կասի. - Թաքավոր ապրած կենաս, հրամայեք էրթանքյ մեյ խատ մեր քյեռշկ-սարեն ֆոանքյ:

Թաքավորն ի, կառնի ուր վազիր, մեկտեղ կէրթան էսա լաճու քյեռշկ-սարեն, կֆոան: Էն գյախ որ կմտնեն էսա քյեռշկ-սարեն, կտիսնան իսոր էոդընիյտերայ խորոտկութեն, սյուս-սանթանաթ, պերիյիտեր կմնա պայ: Թաքավոր, ուր վազիրն հա կֆոան, եա մեկ-մեկելու աչքով-ընքով կանեն: Վարհասընի, կխասնեն մոտ են անշինել փենջարեն:

Թաքավորն ի, լաճուն կխառոյուցի, կասի. - Տղա՛, էսա քյեռշկ-սարեն ռիթուն շիներ իս, զարտըրեր իս, էսա մեկ փենջարեն ինչի՞ չես շինե:

Լաճն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էն մեկ փենջարեն էլ չեմ շինե, որ տյու շինել տաս:

Թաքավորն ի, կասի. - Շատ աղեկ:

Կթողնի կէրթա, ամր կանի, որ ուր երկրի են հան ռիրինջի ուսթեքյ, մարանքյոզներ, ոսկըրճըներ, քյար տաշողներ գյան, որ են փենջարեն շինեն: Ուսթեքյն ին, կժողվոտվին, ութն օր, ութ կիշիր կչարչրվին, ինչ լեզու որ թափըրյուցին, անխնար կէլնի շինի՝ չին կանա շինի: Կուգյա՞ն թաքավորին կասին. - Թաքավոր ապրած կենաս, էսա մեր պան չի, մենք չինք կանա շինե:

Լաճն ի, կտիսնա, որ չեն կանա շինե, կէրթա թաքավորին կասի. - Թաքավոր ապրած կենաս, ազյաթ մի քյաշե, կուզիս ամր արա, ես շինել կուտամ:

Թաքավորն ի, կտիսնա որ ճար չիկա շինելու, լաճուն կասի. - Բալամ, տյու կիտես, ինչխ կուզիս՝ շինել տուր:

Էսա լաճն ի, կիշեր կանթեղ կպոտի, ջին ի, կուգյա կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կասի. - Կուզեմ, որ են անշինել փենջարեն էլ շինիս, ըսկուն շինես՝ են մեկելներայ պես:

Ջին ի, կասի. - կընա՛, ես կշինեմ:

Առատուն ի, կէլնեն վեր, կտիսնան որ ի՞նչ. են փենջարեն էլ են

մեկելներայ պես ակնունքյ-ջավահիլով շինվեր ի: Թաքավորն ի, որ կտիսնա, բիթեն պան հազըր ի, թադարյուք կտիսնա որ խարսնիս անեն: Կկանչի ուր բիթուն սադրազամներ, սարասքարներ, խարսնիս կանի: Քյառսուն օր, քյառսուն կիշեր խարսնիս կանեն, ախչիկ կտանեն: Խարսնիս կանեն, կպոծնեն: Էսա լաճն ի, սանահաթ չունի, պան չունի, ուր սանահաթ ավչութեն ի, ըմեն օր կերթա ավի:

Ավուր մեկ սութ խորոխպեր կպթկի, կուգյա կտիսնա, որ ի՞նչ. էսա քյեռշկ-սարեն որ կայներ ի, ուր կանթղի մարիֆաթն ի: Ի՞նչխ անի, ի՞նչխ չանի, որ էսա կանթեղ ծեռն իսկի, կասի. «Երթամ քիչըմ թազա կանթեղ տամ շինել, պիրիմ էսա տեղ խին կանթղով ծախիմ, բալքի պիրին խեստ կանթղի փոխին»:

Կասի՝ կէլնի, կերթա կեղլեռմ՝ թազա կանթեղ կուտա շինել: Կթալի քյամակ, կուգյա էսա լաճու սարի տռան ճոճն կբռռա, կասի. - Թազա կանթեղ կծախեմ, թազա կանթեղ կծախեմ:

Թաքավորու ախչիկն ի, որ կլսի, կէլնի կասի. - Էլեքյ տեսեք էսա ի՞նչ կանթեղ ծախող ի, ինչով կուտա:

Կէլնին, կխառսուցին, կասին՝ ինչո՞վ կուտաս. կասի՝ խին կանթեղով կուտամ:

Թաքավորի ախչիկն ի կասի. - Ենա ի՞նչ խին կանթեղ ի, թալիր իքյ ենա ըռաֆ, պիրեքյ տվեք մեկ խատ թազա կանթեղ առեք, կախենք մեր տան մեյ պուճախ:

Էսա մարթն ի, որ կլսի թե խին կանթեղ կա ըստեղ, շուտըմ աջալա կանի: Պիրեն խին կանթեղ կուտան էսա մարթուն: Էսա մարթն ի, չվալ թազա կանթեղներ կուտա սրանց, կառնի խին կանթեղ, կդնի ծոց: Էսա մարթն ի, ըստեխ-ենդեխ կան կուգյա, չեր սրա կկնդնի, կմտնի տուն: Կասի. - Ի՞նչ կէլնի, էսա կիշեր զիկ տեղ տվեք չեր առատուն, առատուն թողնեմ երթամ իմ պանին: Իմ տեղ շատ զատն ի, չիմ կանա խասնե:

Իսոյին էլ կասին. - Ի՞նչ կէլնի, կայ:

Էսա մարթն կիշեր կանթեղ կպոտի, ջին կուգյա, կասի. - Ի՞նչ կուզիս:

Էսա մարթն ի, կասի. - Քյեզնիյ ուրիշ պան չեմ ուզե, մենակ էսա տուն ըստեղիյ վերուցես, տանես տնես Չինաստան:

Առատուն ի, էսա ախչիկ կէլնի վեր կտիսնա որ ի՞նչ. նա տուն ուր տեղն ի, նա ուր մարթ կէրնա: Մեյ խատ մարթ մի կուգյա իսրա օդի տռան վերեն բիթուն իրիկուն, առատուն կթողնի կերթա: Բիթուն օր էտա մարթ ըսկուն կանի, իրիկուն կուգյա շան պես կկայնի վեր օդի դռան, առատուն կթողնի կերթա ուր պանի խեւր:

Իրեքյ օր կպոծնի: Էսա ախչկան իրիկն ի, կնայե ավչութեն, չեր իրեքյ օր կուգյա: Կուգյա կտիսնա, որ նա տուն կա, նա ուր կնիկ, նա պան. կշշկոի կմնա:

Թաքավորն էլ առատում որ կէլնի վեր, կտիսնա որ ուր քյեռշկ-սարի վերեն ըսկում արև ի զարկե: Կասի. «Փառքեզ, աստված, էսօր արև տեսանքյ». չկիտի ինչ խաբար ի:

Ուր սաղրազամ առատում էլե, բիթուն պան տեսեր ի, վազի կուգյա մոտ թաքավոր, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, տեսա՞ր որ ես քյե կասի, թե շինածու պան ի էն լաճու տում, տյու զիկ չիր ավատի: Ախր ի՞նչխ կէլներ մեյ կիշերվան մեչ տում էկավ նստավ էնտեղ, մեկ կիշերվան մեչ վերցվավ, - կասի, -. էլի տիս էնտեղ նա տում կա, նա պան:

Թաքավորն ի, կէլնի կտիսնա, որ աղորթ նա տում կա, նա պան, չի ավատա ուր աչիչ, կասի. Էսա էրա՞զ ի, ի՞նչ ի: Կտիսնա որ սաղոթ, տում պան չկա:

Թաքավորն ի, կուգյա տում, ամր կանի, որ ուր փեսեն դեր ի, ալնչալա կանչեն:

Սաղրնզամն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, քյո փեսեն էսա իրեքյ օր կընացե ավչութեն, ալա չի էկե:

Թաքավորն ի, կասի. - Շատ մարթ էորեռխկեքյ պիրեքյ:

Կէլնեն մարթ կէորեռխկեն, որսի տեղեն էտա լաճուն կկանչեն պիրեն: Կանչեն կպիրեն, պիրեն թաքավորու մոտ:

Էսա լաճն ի, որ կուգյա մոտ թաքավոր, լեղապատառ կէլնի, կտիսնա որ նա տում կա, նա ախչիկ, կկտրի կմնա:

Թաքավորն ի, էսա լաճուն կասի. - Ու՞ր է իմ ախչիկ, ես քյիզնից կուզիմ, - տառնա թաքավորն ի, կասի, - քյո տում ու՞ր ի, քյո տեղն ու՞ր ի, ըսկնա պան չէլնի, քյե յոթ օր ժամանակ կուտամ, կնդար պիրիր՝ պիրիր, չպիրիր՝ քյե կկախեմ:

Էսա լաճն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, զիզնից ի՞նչ կուզես, քյո ախչիկն էլ ըստեղ էր, տունն էլ ըստեղ էր՝ քյո կուշտ: Ես ի՞նչխ անիմ, էսա իրեք օր ի, որ ես կնացեր ի ավչութեն, չիկե տում: Ես ի՞նչ կիտեմ, ի՞նչխ էն էլե:

Թաքավորն ի, կասի. - Քյե յոթ օր ժամանակ կուտամ, կնդար՝ կնդար, չկնդար՝ քյե կկախիմ:

Էսա տղեն ի, ի՞նչ անի ի՞նչ չանի. ի՞նչ կանա անի, մեյ պան էլ չի կանա անի: Կէլնի մտածելով կէրթա ծովի քանար, էնտեղ ծունդր կտնի, սաղոթ կանի, որ ուր թալի ծով: Ինք ուր կասի. «Փոխանակ թաքավոր զի կախի, հազր ես զի կթալիմ ծով, կխեղտվեմ»: Ըսկնա կասի, կինի վեր ավզներաց, կուլա, կմոմռա: Ուր մատի մատնիկ ալա ուր մատն ի, որ ըսկնա կուլա, կմոմռա, մատնիկ կքսվի էսա ավզներաց, բիրդան ջին կուգյա, կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կտիսնա որ ջին էկավ, կասի. - Ես քյեզնից պան չեմ ուզի, մենակ իմ տում ինչխ որ կընացե ուրիշ տեղ, ըսկում էլմ գյա ուր տեղ:

Ջինն ի, կասի. - Էտա իմ պան չի, էտա մարդուֆաթ որ կա, կանթղին ի:

Լաճն ի, կասի. - Ապա ի՞նչ անեմ, - կտառնա ջինին կասի, - դյու կանա՞ս զիկ տանե իմ տուն:

Կասի. - Խա, էտա կանամ, - ջինն ի, կասի, - դե աչքերդ կոծի:

Լաճն ի, աչքեր կկոծի, մեյ խատ, մեկ էլ պաչ կանի, կտիսնա որ աղորթ, ուր տան մեչ կայներ ի: Լաճն ի, կէլնի կէրթա ուր էօդեն, կտիսնա որ ուր կնիկ մենակ նստե, կուլա, կմոմռա:

Էսա կնիյն ի, որ կտիսնա ուր մարթ կայնե ուր կշտի խեստ, կուրախնա, կէլնին կինին իրարու վ'իշլինքյ, շատ կուրախնան:

Էդասկնա որ կտիսնան մեկմեկու, լաճն ի, կասի. - Ախր ի՞նչխ էլավ որ տյուքյ էկաք ըստեղ:

Ախչիկն ի, մեյ-մեկ մեյ-մեկ կպատմի լաճուն: Լաճն ի, կիմնա ըմեն պան, կասի. - Էտա մարթ քյո խեստ ի՞նչխ ի:

Ախչիկն ի, կասի. - Ի՞նչխ պիտի էլնի, գյեռ բիթուն իրիկուն կուգյա շան պես կայնի վեր էօդի տռան, առանց խաբար տալու կտառնա, կթողնի կէրթա: Բիթուն օր ըսկուն կանի, ես ալա չուր մկա ինոր խեստ լեզու թռճած չեմ էլե գյեռ ըսկնա:

Լաճն ի, կասի. - Աղեկ, տյու էն ասա, կանթեղ դի՞ր ի դրե, խարա՞ր ես:

Ախչիկն ի, կասի. - Կանթեղ ուր ծոյն ի, ուր ծոյիյ տյուս չի խանե:

Լաճն ի, կտիսնա, որ ուրիշ ճար չկա, կասի. - Ախչիկ, կիտես ի՞նչ պիտի անես:

Կասի. - Ի՞նչ:

Կասի. - Էսօր կառնես քյիչըմ գյինի, կդնես վեր էսա մասին ես էլ կմտնեմ էսա կառոյի տակ: Որ իրիկուն սուտ խորոխպեր կուգյա՝ կէրթաս կմտնես թև, կառնես կպիրիս, կնստեքյ գյինի կխմեքյ, ուրախութեն կանեքյ: Կդառնաս տյու կասես. «Էսա կանդար օր աչկեսի, ասի՝ բալքյի իմ իրիկ գյա, իմ իրիկ չէկավ, մկա տյու էլի իմ իրիկ, ես քյո կնիկ»:

Ախչիկն ի, կառնի գյինին մեկ կանդախ էլ տեղ կդնի վեր մասին հազր կանի: Էսա իրիկուն ի, որ սուտ խորոխպեր կուգյա, մարթ զաթի մտե կառոյի տակ, կէլնի կվազի էսա մարթու դեմ՝ կպիրի կնստըսուցի, կբաշլային գյինի-պան խմիլ:

Էսա ախչիկն ի, կասի. - Ես որ չյուր մկա քյո խաբար չի տե, պատճառ իմ մարթն էր, կասի՝ բալքյի իմ մարթ կուգյա, բալքյի իմ մարթ կուգյա: Տեսա որ չէ, իմ մարթ գյալիքյ չունի, իտոր խամար էսօր ասի՝ էսա մարթու խեստ քյեռֆ կանինք: Մկա տյու իմ մարթ, ես քյո կնիկ:

Էսա մարթն ի, որ էսա պան կլսի, կբաշլային քյեոֆ-ուրախութեն, կուտին, կխմին, ուրախութեն կանին:

Ախչիկ կասի. - Էսա մեկ խմինք իմ խոր՝ թաքավորու կենաց:

Ախչիկ կասի. - Էսա մեյն էլ կխմեմ քյո կենաց, իմ թազա մարթու կենաց: Էսա մեյն էլ կխմեմ իմ խին մարթու կենաց, որ կնաց, էլ գյալ չկա:

Կասի, էսա իրեք կուտախ կխմի: Սորա կատխներ հա կլցի, կզանեն իրար, կուտա էսա մարթուն: Էսա մարթուն ըսկուն կխմըցուցի, որ մարթու վերեն էլ խելք չի մնա: Կուտին, կխմին, քյեոֆ-ուրախութեն կանին, չյուր գյեռ կիշեր:

Ախչիկն ի, կասի. - Էսա մեյ կատսխն էլ առ, խմի իմ կենաց:

Մարթն ի, կվերուցի էտա մեյ կատախն էլ կխմի: Կխմի թե չէ՝ փեսի պես կմնա քյուռսու վերեն դինստեղ:

Էսա ախչիկն ի, որ կտիսնա էսա մարթ փեսայե մնայե քյուռսու վերեն, ուրախ-ուրախ ուր մարթուն կասի՝ արե տյուս: Լաճն ի, կելնի տյուս, կերթա էսա մարթու ծոցից կանթեղ կխանի տյուս: Որ կխանի տյուս, կպոտի, ջին կուգյա: Որ կուգյա, կասի. - Ի՞նչ կուզիս:

Լաճն ի, կասի. - Կուզիմ, որ էսա տուն առաչ որ տեղն էր, էլմ'էլ տանես էնտեղ:

Ջին կանի ինոր ուզած:

Առատուն կելնի վեր, կտիսնան որ տուն էլի իկե ուր առաճվան տեղ: Առատուն ի, թաքավորու տնըցիք կելնին, կտիսնան որ էլմ'էլ ուրենց տուն մթներ ի:

Թաքավորն ի, կկանչի սադրազամ, կասի. - Էսա ի՞նչ էլեր ի, որ մեր տուն մթնե:

Սադրազամն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, - կասի, - էլմ'էլ քյո փեսի տուն ի, առաճվան պես իկե էնտեղ:

Թաքավորն ի, ամր կանի, կասի. - Փեսեն կանչեք:

Կերթան փեսին կկանչեն, կպիրեն թաքավորի մոտ:

Էսա լաճն ի, կառնի թաքավոր կերթա ուրենց տուն: Կտանի ինոնց էոդեն կասի. - Թաքավոր ապրած կենաս, - կասի, - էսա շուն էր, որ մեր տուն ըստեղից տարավ:

Թաքավորն ի, ամր կանի, որ էտա ջանդակ կտոտրեն, թալեն ծով:

Էտա մարթու ջանդակ կկտոտրեն, կանեն կիմա-կիմա, կթալեն ծով: Թաքավոր կթողնի կերթա տուն: Էսա լաճն ի, զյինա ուր սանահաթին կերթա. էլմ'էլ կիմնա, որ էսա սութ խորոխպոր մեյ խատ էլ ախպեր կա: Ի՞նչխ անի ի՞նչխ չանի, որ իսորան էլ ծեռ պիրի, սպանի: Մեկ օր սութ խիվինդութեն կդնի վերեն:

Թաքավորն ի, էլ խեքիմ չի մնա, որ չի պիրե, էլ տեղ-տեղրվանք չի մնա, որ չին անե՝ ճար չկա, էսա լաճ չի լավանա:

Մեկ օր էսա սութ խորոխպոր ախպերն ի, կուգյա էսա լաճուն տոռան վերեն կասի. - Էսա տեղ խիվանդ կա՞:

Կասեն. - Խա:

Էսա մարթն ի, կասի. - Ինչ կանդար որ տեղ անեքյ ֆայդա չանե: Ինոր աղոթել պիտի տաք, որ լավանա:

Էտա մարթն ի, կասի. - Ես խորոտ աղոթ անող կնիկ կճանչնամ, կուզեքյ կէօրեոխկեմ, թող գյա աղոթի, թող ծեր եղնիկ լավանա:

Էսա լաճուն կնիյն ի, որ էսա պան կլսի, կէրթա ուր մարթուն կասի. - Գյեռ ըսկնա աղոթ արող կնիյմ կա, ասենք, թող գյա քյե աղոթի՝ աղեյնաս:

Էսա լաճն ի, կասի. - Ասեք, թող գյա:

Կուգյան էսա մարթուն կասեն. - Վաղ անպատճառ էտա կնգյան էօրեոխկես ըստեղ:

Մարթն ի, կասի. -Աղեկ:

Կթողնի, կէրթա:

Էն մեկել օր էտա սութ խորոխպոր ախպեր կնգյան խալավ կխայնի, կուգյա թաքավորի ախչկան տոռան վերեն, կասի. - Էրեկ էսատեղ աղոթ արող ին ուզե, կուզեք գյամ:

Իսրանք ի կասին - Խա, թող գյա:

Կառնին, կառնին պիրին վեր էսա լաճու մոտ, կնստուցեն, որ աղոթի: Էսա լաճ կխասկնա, որ էսա սութ խորոխպոր ախպերն ի: Էսա մարթն ի, կուզի որ խալվներաց տկեն ըոռվել խանիլ՝ իսոր սպանել: Համան էսա լաճն ի, ինորից շոտ տավրամիշ կէլնի, կքաշի ուր ըոռվել, կուտա իսոր սոտի մեչ, կփռի ենտեղ:

Թաքավորի ախչիկն ի, կուգյա կտիսնա, կասի. - Աստված քյո տուն ավիրի, էսա ի՞նչ էր արեր, իսորա մեղաց տկեն ի՞նչխ պիտի էլնես, էսա խեղճ աղոթք արող կնիկ ի՞նչ էր արե քյե:

Լաճն ի, կասի. - Մեյ խատ տարեք տեսեք, խենքյ էտա կնիկ ի, թե մարթ:

Կտանեն կտիսնա, որ աղորթ մարթ ի:

Ամր կանի, որ իսոր ջանդակ կտրին, կտոտին, անին կիմա-կիմա, թալեն ծով: Էսա ջանդակ կկտոտին, կթալին ծով: Էսա լաճն ի, կտիսնա որ ուր էլ դյուշման չկա, ֆաս կթեքյի, ուր քյեֆով ման կուգյա: